




ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



2016


## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<b>1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ</b>	3
1.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ	3
1.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ ԵՎ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	5
<b>2 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ</b>	10
2.1 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	10
2.2 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԶՈՒՏ ՀՈՍՔԵՐ	13
<b>3 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ</b>	14
3.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	14
3.2 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ	15
<b>4 ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ</b>	17
<b>5 ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ</b>	19

## 1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ


### 1.1 ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ)

2016 թվականին ՀՆԱ աճը կազմել է 0.2%, ինչը 2009 թվականից ի վեր արձանագրված ամենացածր ցուցանիշն է: Արդյունաբերության ավելացված արժեքի աճը կազմել է 5.1% (նպաստումը՝ ՀՆԱ աճին՝ 0.8 տոկոսային կետ), առևտուր և ծառայություններին՝ 4.0% (նպաստումը՝ 1.9 տոկոսային կետ): Գյուղատնտեսության ավելացված արժեքը նվազել է 5.8%-ով (նպաստումը՝ -1.0 տոկոսային կետ), շինարարության՝ 11.3%-ով (նպաստումը՝ -1.0 տոկոսային կետ), իսկ զուտ հարկերը 4.3%-ով (նպաստումը՝ -0.5 տոկոսային կետ):



ՀՆԱ կառուցվածքում նկատելի է ծառայությունների մասնաբաժնի կայուն ավելացման միտումը: Վերջինիս մասնաբաժնը 2016 թվականին 2012 թվականի համեմատությամբ ավելացել է 7.1 տոկոսային կետով: Հաշվետու տարում 2012 թվականի համեմատությամբ արդյունաբերության մասնաբաժնն ավելացել է 0.7 տոկոսային կետով, իսկ առևտուրի շինարարության ու գյուղատնտեսության մասնաբաժնները նվազել են համապատասխանաբար 1.5; 3.7 և 1.9 տոկոսային կետով:

Ըստ ՀՆԱ հիմնական ծախսային բաղադրիչների աճել են վերջնական սպառման ծախսերը, ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը համապատասխանաբար 1.4%, 19.2% և 8.8%-ով, իսկ համախառն կուտակումը նվազել է 8.5%-ով:




2012 թվականի համեմատությամբ 2016 թվականին ՀՆԱ կառուցվածքում համապատասխանաբար 7.3 և 6.8 տոկոսային կետով կրճատվել են վերջնական սպառման ծախսերի ու համախառն կուտակման մասնաբաժինները: Վերջինս նվազեցնում է հետագա տարիներին տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Միաժամանակ, կրճատվել է նաև ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման բացասական սալդոյի մասնաբաժինը՝ 10.6 տոկոսային կետով:

### ՀՆԱ բաղադրիչները օգտագործման եղանակով, 2015-2016թթ

	2015			2016		
	Ընթացիկ գներով, մլրդ դրամ	Կառուցվածք, %	աճի տեմպը, %	Ընթացիկ գներով, մլրդ դրամ	Կառուցվածք, %	աճի տեմպը, %
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	5032.1	100.0	103.0	5067.9	100.0	100.2
Վերջնական սպառման ծախսեր	4589.7	91.6	93.6	4602.6	90.8	101.4
Համախառն կուտակում	1045.9	20.4	98.8	938.6	18.5	91.5
Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդո	-612.2	-11.5	x	-515.1	-10.2	x
արտահանում	1499.4	29.7	104.9	1679.6	33.1	119.2
ներմուծում	2111.5	41.3	84.9	2194.7	43.3	108.8
Վիճակագրական շեղում	8.6	-0.4	x	41.8	0.8	x


Վերջնական սպառման ծախսերի աճին նպաստել են տնային տնտեսությունների 0.9%, պետական հիմնարկների 3.8% և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների 12.3% վերջնական սպառման ծախսերի աճերը: Բնակչության անհատական պահանջմունքները նվազել են 5.8%-ով:

2016 թվականի ՀՆԱ աճին՝ արտահանման 5.7 տոկոսային կետով նպաստումը թույլ է տվել տնտեսությունը պահել դրական աճի տիրույթում:




## 1.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ ԵՎ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2016 թվականին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՅ) կազմել է 100.5%: 2016թ. դեկտեմբերը 2015թ. դեկտեմբերի նկատմամբ այն կազմել է 99.9%, իսկ 2016թ. դեկտեմբերը 2016թ. նոյեմբերի նկատմամբ՝ 117.9%: 2016 թվականի մայիսից ամսական աճողական ՏԱՅ-ը դրսևորել է դանդաղող աճի միտումներ:



ՏԱՅ-ի վրա բացասական են ազդել գյուղատնտեսության համախառն արտադրանքի 5.2% և շինարարության ծավալի 10.8% նվազումները: Աճ է գրանցվել ծառայությունների ոլորտում՝ 7.1%, արդյունաբերությունում՝ 6.7% և առևտուրի շրջանառությունում՝ 1.0%:


ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ծավալը 2016 թվականին նվազել է 10.8%-ով: Եթե 2015թվականին ամսական աճի ցուցանիշով շինարարությունում նվազում էր գրանցվել միայն նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, ապա 2016թ., բացառությամբ հունվար և փետրվարի, բոլոր ամիսներին գրանցվել է ցուցանիշի նվազում:




Հսկ գործունեության դեսակների 2016 թվականին շինարարության աճ է գրանցվել հետևյալ ենթաճյուղում (ներկայացված է ըստ տեսակարար կշռի մեծության նվազման): Մունաքարտ՝ 3.3%, Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 54.6%, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝ 55.8%, սպասարկման այլ ծառայություններ՝ 12.0%, մշակող արդյունաբերությունում՝ 61.7%, հանքագործական արդյունաբերությունում՝ 89.4%, ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ 73.6%:

Շինարարության ծավալները նվազել են անշարժ գույքի հետ կապված գործունեության գծով՝ -15.3%, մշակույթ, զվարճություններ հանգիստ՝ -16.2%, տեղեկատվություն և կապ՝ -33.1%:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների շինարարության աճ է գրանցվել միջազգային վարկերի գծով՝ 28.3%: Նվազում է գրանցվել մարդասիրական օգնության՝ -60.3%, պետական բյուջեի՝ -36.9%, բնակչության միջոցների՝ -11.6%, կազմակերպությունների միջոցների՝ -8.6%, համայնքների միջոցների՝ -3.8% գծով:




ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ համախառն արտադրանքը 2016 թվականին նվազել է 5.2%-ով: Անսախարեալ անկում է գրանցվել սեպտեմբերին՝ 2015 թվականի սեպտեմբերի նկատմամբ նվազելով 19.5%-ով (2015թ. համանման ցուցանիշը՝ 6.4% աճ) և հոկտեմբերին՝ 2015 թվականի հոկտեմբերի նկատմամբ՝ 29.8%-ով (2015թ. համանման ցուցանիշը՝ 13.2% աճ): Նոյեմբերին նախորդ տարվա նոյեմբերի նկատմամբ գրանցվել է 6.3% աճ (ինչը ավելի ցածր է քան 2015 թվականի համանման ցուցանիշը՝ 11.3%), դեկտեմբերը դեկտեմբերի նկատմամբ՝ 6.5% աճ (2015թ. համանման ցուցանիշը՝ 13.0% աճ):



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի նվազումը պայմանավորված է առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող բուսաբուծության ենթաճյուղում գրանցված 11.7% նվազմամբ: Անասնաբուծության ենթաճյուղում գրանցվել է 4.7%, իսկ ձկնորսության և ձկնաբուծության ենթաճյուղում 3.0% աճ:

Բուսաբուծության արտադրատեսակներից էական նվազում է գրանցվել խաղողի համախառն բերքի՝ -42.2%, պտուղ հատապտուղների՝ -37.2%, բուստանային կուլտուրաների՝ -17.7% և բանջարեղենի՝ -3.9%, հացահատիկի և հատիկացնդեղենների՝ -2.5%, կարտոֆիլի՝ -4.2% գծով: Գյուղատնտեսական կենդանու և թռչնի իրացման ծավալների աճը կազմել է 6.2%, կաթի արտադրությանը՝ 3.5%, ձվի արտադրությանը՝ 5.3%:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ծավալի աճը կազմել է 6.7%: Աճ է գրանցվել արդյունաբերության բոլոր 4 ճյուղերում հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում 8.3% (աճը դանդաղման միտում ունի), մշակող արդյունաբերություն 7.7% (աճը հունիսից արագացման միտում ունի), էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում 2.0% (աճը տարեսկզբից դանդաղման միտում ունի) և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում 7.0% (աճը տարեսկզբից դանդաղման միտում ունի):




Շարունակվում է մշակող արդյունաբերությունում էական տեսակարար կշիռ ունեցող սննդի արդյունաբերության, ծխախոտային արտադրատեսակների արտադրության, դեղագործական արտադրանքի արտադրության արտահանման ծավալների աճի միտումը:


#### Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի աճը և կառուցվածքը, %

	Աճ 2015թ. նույն ժ/2 նկատմամբ, %	Կառուցվածք, %
Սննդամթերքի արտադրություն	2.6	20.1
Հիմնային մետաղների արտադրություն	3.0	10.7
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	23.5	9.5
Խմիչքների արտադրություն	7.4	7.8
Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	87.0	2.7
Այլ ոչ մետաղական հանքային արդարադրատեսակների արդարադրություն	-20.4	2.4
Ռետինե և պլաստմասսայի արտադրատեսակների արտադրություն	7.2	1.9
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	0.1	1.5
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	2.8	0.9
Հագուստի արտադրություն	16.4	0.8
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	6.7	0.7
Քիմիական նյութերի և քիմիական արդարադրատեսակների արդարադրություն	-8.7	0.6
Դեղագործական արտադրանքի արտադրություն	6.0	0.6
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	56.0	0.5
Համակարգչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրություն	27.5	0.4
Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում	6.7	0.3
Կահույքի արտադրություն	15.3	0.2
Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում	35.5	0.1
Փայտանյութի մշակում, բացի կահույքից	18.8	0.1
Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	19.2	0.1
Մանածագործական արդարադրատեսակների արդարադրություն	-4.8	0.0

Նախորդ երեք տարիների արտահանման ծավալների նվազման դիմաց հաշվետու ժամանակահատվածում աճ է գրանցվել խմիչքների արտադրության, պատրաստի մետաղական արտադրատեսակների, այլ ոչ մետաղական արտադրատեսակների արտահանման գծով:




ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ 2016 թվականին աճել է 1.0%-ով (դեկտեմբերը դեկտեմբերի նկատմամբ՝ 4.4%): Ընդ որում, մանրածախ առևտրի շրջանառությունը նվազել է 2.6%-ով, մեծածախ առևտրի ծավալներն աճել են 4.5%, իսկ ավտոմեքենաների առևտրինը՝ 22.5%-ով:



Հայր առևտրի օբյեկտների առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող (77.5%) խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ծավալներն աճել են 2.1%-ով, սակայն առևտրի մյուս օբյեկտների գծով գրանցվել են նվազումներ. առևտրի այլ օբյեկտներ (ներառում է շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերը)՝ -23.8% (տեսակարար կշիռը 12.3%), սպառողական ապրանքների շուկաներ՝ -2.6% (տեսակարար կշիռը՝ 6.5%), գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ՝ -7.0% (տեսակարար կշիռը՝ 1.5%), կրաքաներ՝ -5.0% (տեսակարար կշիռը՝ 2.2%):

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ծավալի աճը 2016 թվականին կազմել է 7.1%: Ծառայությունների կառուցվածքում շարունակում են գերակշռել ծառայությունների հետևյալ տեսակները՝ «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» և «կացության և հանրային սննդի կազմակերպում»: 2016 թվականին ծառայությունների կառուցվածքում նշվածները միասին կազմել են 76.4%:



Բացառությամբ «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» տեսակի (նվազում՝ -2.9%, տեսակարար կշիռ՝ 5.3%) աճ է գրանցվել ծառայությունների մյուս բոլոր տեսակներով:

#### Ծառայությունների աճը և կառուցվածքը, 2016թ.


	Աճ, %	Տեսակարար կշիռ, %
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	3.9	19.5
մշակույթ, զվարճություններ և հանգիստ	22.2	18.7
տեղեկատվություն և կապ	0.2	17.4
տրանսպորտ	17.9	13.3
կացության և հանրային սննդի կազմակերպում	0.1	7.5
վարչարարական և օժանդակ գործունեություն	2.7	4.8
կրթություն	4.8	4.1
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	1.8	3.7
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	5.8	3.7
սպասարկման այլ ծառայություններ	4.0	2.0

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ. 2016 թվականին SCS ոլորտում գրանցվել է 1.1% աճ: Աճը պայմանավորված է SCS առևտրի 8.7% աճով: SCS ծառայությունները նախորդ տարվա բացասական ցուցանիշի նկատմամբ արձանագրել են աճի գրոյական մակարդակ: Ընդ որում, վերջինիս գերակշռող մասը կազմող հեռահաղորդակցության ծառայությունների ծավալը նվազել է 9.8%-ով: Նվազում է գրանցվել SCS արտադրության գծով՝ 1.8%-ով:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից վարվող վարչական ռեգիստրի տվյալների համաձայն 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ SCS ծառայությունների բնագավառում գործունեություն են իրականացնում 512 ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների թիվը կազմում է 6223 մարդ: Շրջանառության ծավալը կազմել է 62.5 մլրդ դրամ, որից արտահանումը՝ 43.3 մլրդ դրամ:

2016 թվականի ընթացքում հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրվել են 102 ընկերություններ, որոնց կողմից ստեղծվել են 412 նոր աշխատատեղ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ. 2016 թվականին հանրապետություն է ժամանել 1 մլն 259 հազար 657 գբոսաշրջիկ կամ 2015 թվականի նկատմամբ ցուցանիշն աճել է 5.7%-ով: Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 1 մլն 262 հազար 687 մարդ կամ 2015 թվականի նկատմամբ ցուցանիշն աճել է 6.3%-ով:



## 2 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

### 2.1 ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2016 թվականին արտաքին առևտրաշրջանառությունը աճել է 7.4%: Արտահանումն աճել է 20.0%, իսկ ներմուծումը՝ 1.6%-ով:





	հազար ԱՄՆ դոլար				
	2012	2013	2014	2015	2016
Առևտրա-շրջանառություն	5641.4	5864.6	5971.7	4740.9	5075.3
Ապրանքների արտահանում	1380.2	1478.7	1547.3	1485.3	1782.9
Ապրանքների ներմուծում	4261.2	4385.9	4424.4	3239.2	3292.4
Առևտրի հաշվեկշիռ	-2881.0	-2907.2	-2877.1	-1753.9	-1509.5

### Արտահանում

#### Ըստ ապրանքախմբերի՝

արտահանման աճ է գրանցվել կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 11.2 անգամ, բուսական ծագման արտադրանք՝ 83.2%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 73.9%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 63.2%, մեքենաներ, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 51.1%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 43.2%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 37.3%, մանածագործական իրեր՝ 36.7%, պատրաստի սննդի արտադրանք՝ 28.6%, սարքեր և ապարատներ՝ 27.7%, փայտ և փայտյա իրեր՝ 27.4%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 26.1%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 15.5%, տարբեր արդյունաբերական ապարատներ՝ 10.6%:

արտահանման նվազում է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով՝ կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ -23.7%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -3.1%, հանքահումքային արտադրանք՝ -1.3%, պլաստմասսա և դրանցից իրեր, կառուցուկ և ռետինե իրեր՝ -1.7%, թուղթ և թղթից իրեր՝ -1.5%:



**Ըստ երկրների խմբերի (հիմնական գործընկեր երկրներն ըստ խմբում տեսակարար կշռի նվազման):**

**ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ – արտահանման աճը կազմել է 43.5%,**

- Արտահանման աճ է գրանցվել դեպի Ռուսաստան՝ 51.5%, Բելառուս՝ 2.1 անգամ, Ուկրաինա՝ 29.7%, Ղազախստան՝ 42.9%:
- Արտահանման նվազում է գրանցվել դեպի Թուրքմենստան՝ -66.9% և ԱՊՀ այլ երկրներ՝ -12.0%:

**ԵՄ ԵՐԿՐՆԵՐ արտահանման աճը կազմել է 15.9%,**

- Արտահանման աճ է գրանցվել դեպի Բուլղարիա՝ 93.1%, Նիդերլանդներ՝ 7.4%, Լեհաստան՝ 29.2%:
- Նվազում է գրանցվել դեպի Գերմանիա՝ -0.9%, Բելգիա՝ -2.0%, Իտալիա՝ -2.0%, Ռումինիա՝ -30.7%:

**ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ արտահանման աճը կազմել է 13.7%,**

- Արտահանման աճ է գրանցվել դեպի Վրաստան՝ 17.3%, Կանադա՝ 29.2%, Իրաք՝ 5.6%, «Այլ երկրներ» ենթախումբ՝ 74.5%, Շվեյցարիա՝ 91.6%, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 7.0 անգամ:
- Նվազում է գրանցվել դեպի Չինաստան՝ -41.7%, Իրանի Իսլամական Հանրապետություն՝ -8.4%, ԱՄՆ՝ -26.7%, Թուրքիա՝ -66.3%:


## ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

**Ըստ ապրանքախմբերի՝**

Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով. կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 59.0%, մանածագործական իրեր՝ 37.1%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 36.8%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 30.4%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 13.9%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 8.7%, տարբեր արդյունաբերական ապարատներ՝ 6.2%, պատրաստի սննդի արտադրանք՝ 5.4%, թուղթ և թղթից իրեր՝ 4.1%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 1.0%:

Ներմուծման նվազում է գրանցվել հետևյալ ապրանքախմբերի գծով. վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -16.2%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -

12.5%, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք՝ -12.3%, բուսական ծագման արտադրանք՝ -14.0%, հանքահումքային արտադրանք՝ -7.5%, փայտ և փայտյա իրեր՝ -7.3%, պլաստմասսա և դրանցից իրեր, կառուցուկ և ռետինե իրեր՝ -4.8%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -3.3%, սարքեր և ապարատներ՝ -18.2%:



**Ըստ երկրների խմբերի (իիմնական գործընկեր երկրներն ըստ խմբում տեսակարար կշռի նվազման):**

**ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ - Ներմուծման աճը կազմել է 10.1%:**

- Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Ռուսաստան՝ 14.4%, Բելառուս՝ 5.5%, Ղազախստան՝ 81.7%, Թուրքմենստան՝ 2.8 անգամ:
- Ներմուծման նվազում է գրանցվել Ուկրաինայից՝ -16.5%:

**ԵՄ ԵՐԿՐՆԵՐ - Ներմուծումը նվազել է 3.5%-ով:**


- Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Գերմանիա՝ 3.9%, Բելգիա՝ 12.2%, «ԵՄ այլ երկրներ» Ենթախումբ՝ 32.4%, Լեհաստան՝ 5.2%, Ավստրիա՝ 1.1%, Շվեյցարիա՝ 60.4% և Կիպրոս՝ 7.6%:
- Ներմուծման նվազում է գրանցվել Իտալիայից՝ -15.7%, Միացյալ Թագավորությունից՝ -11.1%, Ֆրանսիայից՝ -27.0%, Նիդերլանդներից՝ -6.1% և Իսպանիայից՝ -8.4%:

**ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ - Ներմուծման աճը կազմել է 0.1%:**

- Ներմուծման աճ է գրանցվել հետևյալ երկրներից. Վրաստան՝ 8.1%, Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 10.6%, Չինաստան՝ 6.8%, Շվեյցարիա՝ 18.0%, Թուրքիա՝ 25.5%:
- Ներմուծման նվազում է գրանցվել «Այլ երկրներ» Ենթախմբից՝ -2.2%, Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ -17.2%, Միացյալ Նահանգներից՝ -31.7%, Ճապոնիայից՝ -14.1%:

## 2.2 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԶՈՒՏ ՀՈՍՔԵՐ

Օտարերկրյա ներդրումների գուտ հոսքերի ծավալը կազմել է մոտ 81.6 մլրդ դրամ (բացարձակ փոփոխությունը կազմում է -36.8 մլրդ դրամ), որից ուղղակի ներդրումների գուտ հոսքերը՝ կազմել են 62.7 մլրդ դրամ (բացարձակ փոփոխությունը կազմում է -6.7 մլրդ դրամ):



Հսկ գործունեության գենակների ընդամենը ներդրումների գուտ հոսքերը հիմնականում ուղղվել են՝

- ⇒ հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն. 40.9 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 41.8 մլրդ դրամ, երկրները՝ Միացյալ Թագավորություն և Ռուսաստան,
- ⇒ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավագործական օդի մատակարարում. 40.4 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 4.0 մլրդ դրամ, երկրները՝ Լյուքսեմբուրգ, Ռուսաստան, ԱՄՆ,
- ⇒ կացության կազմակերպում. 32.5 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 30.9 մլրդ դրամ, երկրները՝ Կիպրոս, Իտալիա, ԱՄՆ,
- ⇒ շենքերի շինարարություն. 9.0 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ չեն եղել երկրներ՝ Վիրջինյան կղզիներ, ԱՄՆ,
- ⇒ խմիչքների արտադրություն. 8.6 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 7.9 մլրդ դրամ, երկրները՝ Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Լյուքսեմբուրգ,
- ⇒ հեռահաղորդակցություն. 7.2 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ -10.4 մլրդ դրամ, երկրներ՝ Ֆրանսիա, Լիբանան,
- ⇒ ծխախոտե արտադրատեսակների արտադրություն. 6.9 մլրդ դրամ, ուղղակի ներդրումներ չեն եղել երկրներ՝ Կանադա,
- ⇒ հիմնային մետաղների արտադրություն. -13.3 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 5.8 մլրդ դրամ, երկրներ՝ Գերմանիա, Ռուսաստան, Միացյալ Թագավորություն,
- ⇒ բուսաբուծություն ու անասնաբություն, որսորդություն և հարակից ծառայություններ. 4.1 մլրդ դրամ, որից ուղղակի ներդրումներ՝ 3.5 մլրդ դրամ, երկրներ՝ Արգենտինա, Ռուսաստան:

### 3 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

#### 3.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ


Պետական բյուջեի եկամուտների աճը 2015 թվականի համեմատությամբ կազմել է 0.7%, ծախսերինը՝ 2.4%: Բյուջեի պակասուրդը կազմել է 170.5 մլրդ դրամ:

**ՀՀ պետական բյուջեի ցուցանիշներ, մլրդ ՀՀ դրամ**


	2012	2013	2014	2015	2016
<b>Եկամուտներ</b>	946.2	1071.4	1144.8	1147.2	1155.0
<b>Ծախսեր</b>	1006.1	1142.9	1235.1	1293.9	1325.5
<b>Պակասուրդ</b>	-59.9	-71.5	-90.3	-146.7	-170.5

Պետական բյուջեի պակասուրդի աճին զուգահեռ 2012-2016թ.թ. աճել է նաև պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը: Հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածում 2012 թվականի համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով:

**Հարկային եկամուտներ/ՀՆԱ, %**




**Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ, %**




Պետական բյուջեի հարկերի և տուրքերի գծով մուտքերի աճը կազմել է 1.1%, պաշտոնական դրամաշնորհներինը՝ 50.6%, իսկ այլ եկամուտների գծով մուտքերը նվազել են 13.3%-ով: Բյուջեի հարկերի և տուրքերի գծով մուտքերի աճին նպաստել են հիմնական հարկատեսակների գծով 2015 թվական համեմատ հավաքագրման գրանցված աճերը:

**Պետական բյուջեի եկամուտների կառուցվածք, %**



**Պետական բյուջեի հարկերի և տուրքերի կառուցվածք, %**



Մասնավորապես, եկամտային հարկի գծով՝ 6.7% (պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում 28.8%), շահութահարկի գծով՝ 22.7% (կառուցվածքում 11.0%), ակցիզային հարկի գծով աճը կազմել է 22.0% (կառուցվածքում 5.2%), պետական տուրքի գծով՝ 2.8% (կառուցվածքում 2.9%), շրջանառության հարկի գծով՝ 28.7% (կառուցվածքում 1.3%), նպատակային սոցիալական վճարների գծով՝ 23.0% (կառուցվածքում 1.2%) և հաստատագրված վճարների գծով՝ 3.1% (կառուցվածքում 0.3%):

Նվազում է գրանցվել ավելացված արժեքի հարկի գծով՝ -7.7% (կառուցվածքում 33.9%), իոդի հարկի գծով՝ -90.9% (կառուցվածքում 0.0%), մաքսատուրքերի գծով՝ -9.9% (կառուցվածքում 4.8%), բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարների գծով՝ -15.9% (կառուցվածքում 2.4%) և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ -98.9% (կառուցվածքում 0.0%):

Պետական բյուջեի ծախսերից ընթացիկ ծախսերի գծով գրանցվել է 3.3% աճ: Ընթացիկ ծախսերից նվազում է գրանցվել միայն ծառայությունների և ապրանքների ձեռք բերման գծով ծախսերի մասով՝ -37.6%: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը նվազել են 12.0%-ով:

Ըստ գործառնական դասակարգման խմբերի պետական բյուջեի ծախսերը աճել են. ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը՝ 10.7%-ով, պաշտպանության գծով ծախսերը՝ 6.7%-ով, կրթության գծով ծախսերը՝ 0.6%-ով և սոցիալական պաշտպանության գծով ծախսերը՝ 3.3%-ով: Մնացած ծախսերի գծով գրանցվել են նվազումներ:

### 3.2 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ



Պետական պարտքը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 5.9 մլրդ ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 17.0%: Արտաքին պետական պարտքը կազմել է 4.8 մլրդ ԱՄՆ դոլար, աճը՝ 11.3%, իսկ ներքին պարտքը՝ 1.1 մլրդ ԱՄՆ դոլար, աճը՝ 49.3%:




Արտաքին պետական պարտքի կառուցվածքում 0.5 տոկոսային կետով ավելացել է ՀՀ կառավարության պարտքը (աճը կազմել է 12.0%): ՀՀ կենտրոնական բանկի պարտքի աճը կազմել է 5.9%: Վերջինիս գերակշիռ մասը կազմող բազմակողմանի վարկային ծրագրերի գծով գրանցվել է 3.5% աճ, երկրորդ բաղադրիչով՝ երկկողմանի վարկային ծրագրեր՝ աճը կազմել է 17.2%:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում 1.2-ական տոկոսային կետով ավելացել են բազմակողմանի վարկային ծրագրերի և երկկողմանի վարկային ծրագրերի տեսակարար կշիռները (աճերը համապատասխանաբար՝ 13.7 և 24.1%), ոչ ռեզիլենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի տեսակարար կշիռն ավելացել է 0.3 տոկոսային կետով (աճը՝ 10 անգամ), իսկ առևտրային բանկերի կողմից ստացված վարկերի տեսակարար կշիռը չի փոխվել (նվազել է 3.1%-ով):

Տեսակարար կշռի 2.1 տոկոսային կետով նվազում է գրանցվել ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի գծով (աճը՝ 0.3%):




Նշված զարգացումների արդյունքում դոլարային հարաբերակցությամբ 2015թվականի համեմատ 8.2 տոկոսային կետով ավելացել են պետական պարտը/ՀՆԱ և 4.7 տոկոսային կետով արտաքին պարտը/ՀՆԱ հարաբերակցությունները:




#### 4 ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Առևտրային բանկերի կողմից տրվող ընդհանուր վարկերի մնացորդը նախորդ տարվա -3.1% նվազման դիմաց 2016 թվականին աճել է 14.9%-ով՝ կազմելով 2.44 տրլն դրամ: Ընդհանուր վարկերի կառուցվածքում շարունակում է գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերի տեսակարար կշիռը, որը 2016 թվականին կազմել է 63.0%՝ 2015 թվականի 65.7%-ի դիմաց:




Ընդհանուր վարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2016թ. կազմել է 48.1%, իսկ միայն ռեզիլիանտներին տրամադրված ընդհանուր վարկերի մնացորդ/ՀՆԱ ցուցանիշը՝ 40.3%: Վարկերի մնացորդում ևս շարունակում է գերազանցել ռեզիլիանտներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը, թեև ծավալով ռեզիլիանտներին տրամադրած վարկերի մնացորդը 2015թ. համեմատությամբ աճել է 5.6%-ով, իսկ ոչ ռեզիլիանտներին՝ 2.8 անգամ (արդյունքում՝ 7.7 տոկոսային կետով ավելացել է ոչ ռեզիլիանտների մասնաբաժինը):




Ըստ ճյուղերի բաշխվածքի ռեզիլիանտներին տրամադրված վարկերի կառուցվածքում շարունակում են գերազանցել արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկերի տեսակարար կշիռները, որոնց գումարային մասնաբաժինը կազմում է 58.2%:

Ռեզիլիանտներին տրամադրված ընդհանուր վարկերի կառուցվածքում ավելացել են արդյունաբերության և սպասարկման ոլորտներին ուղղված վարկերի մնացորդների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 1.1 և 1.2 տոկոսային կետերով, ի հակադրություն վերջիններիս՝ նվազել են գյուղատնտեսության՝ 0.4, շինարարության՝ 0.5, առևտրի՝ 1.5, սպառողական վարկերի՝ 0.7 և ինվորեքսային վարկերի՝ 0.3 տոկոսային կետերով, վարկերի մնացորդների տեսակարար կշիռները:

**ՀՀ ռեզիդենտներին առևտրային բանկերի կողմից տրամադրված  
ընդհանուր վարկերի կառուցվածքն ըստ ճյուղերի, %**





Ռեզիդենտներից առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների կառուցվածքում շարունակում են գերակշռել արտարժույթով ավանդները՝ 60.3%, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 4.0 տոկոսային կետով:



2016 թվականին ռեզիդենտների կողմից ներդրված դրամով ավանդները 2015 թվականի համեմատությամբ աճել են 30.3%-ով՝ նախորդ տարվա 13.3%-ի դիմաց, իսկ արտարժույթով ավանդների աճը կազմել է 10.1%՝ նախորդ տարվա 14.1% աճի դիմաց:


Ըստ ավանդների ժամկետայնության՝ ռեզիդենտների կողմից կատարված թե դրամով և թե արտարժույթով ավանդների կառուցվածքում շարունակում են մեծ տեսակարար կշիռ ունենալ ժամկետային ավանդները. որոնք 2016 թվականին կազմել են համապատասխանաբար 63.5 և 77.3%. Դրամով ժամկետային ավանդների 60.5%-ը բաժին է ընկնում տնային տնտեսություններին, իսկ ցափահանջ ավանդների կառուցվածքում գերակշռում են ձեռնարկությունները՝ 45.8% է (95.0%-ը մասնավոր ձեռնարկությունների ավանդներն են):



Արտաքիլոմետր ժամկետային ավանդներում տնային տնտեսությունների ավանդների մասնաբաժինը՝ 83.3%: Արտաքիլոմետր ցախանց ավանդների 47.2%-ը ձեռնակություններից ներգրավված ավանդներն են (96.9%-ը մասնավոր ձեռնարկություններից):

## 5 ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

2016 թվականին տրանսֆերտների ներհոսքը կազմել է 1532.9 մլն ԱՄՆ դոլար, 2012 թվականի համեմատ նվազելով 31.4%-ով, արտահոսքը կազմել է 761.0 մլն ԱՄՆ դոլար՝ նվազելով 7.6%-ով: Արդյունքում զուտ ներհոսքը հաշվետու ժամանակահատվածում 2012 թվականի համեմատ նվազել է 48.0%-ով:



Տրանսֆերտների ներհոսքի կառուցվածքում շարունակում է գերակշռել Ռուսաստանից ստացված տրանսֆերտների մասնաբաժինը, որը 2016 թվականին կազմել է ընդհանուր ներհոսքի 58.5%-ը՝ 2012 թվականի 73.5%-ի դիմաց: